ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

2018-2019 ուստարի

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.*

Ակնակապի__, բար__իթողի, հա__շտապ, ա__բարիշտ, ամբ___ն, դ__խոյական, դա__նեպսակ, բոցամու__, կա__կառել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Արտագրել՝ մեծատառերը թողնելով ըստ անհրաժեշտության.

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆԵՂՈՍԻ ՀՈՎԻՏ, ԵՐՎԱՆԴ ՍԱԿԱՎԱԿՅԱՑ, ՆՈՐ ՋՈՒՂԱ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՀՈԲ ԵՐԱՆԵԼԻ, ՋՈՐԻ ՄԻՐՈ, ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ, ԻՎԱՆ ԱՀԵՂ, ՉՈՒԴ ԼԻՃ, ՏՐԴԱՏ ԵՐՐՈՐԴ, ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ, ՊԱՐՋ ԼԻՃ:

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Սյունակներից առանձնացնել և կողք կողքի գրել հոմանիշ բառերը (հոմանիշների եռյակ).

1. երկնագույն	1. փառաբանել	1. բանիմաց
2. մեծարել	2. լազուր	2. երկբայել
3. լրջմիտ	3. խելացի	3. անբարեկիրթ
4. անտաշ	4. վարանել	4. կապույտ
5. կասկածել	5.բռի	5. ջատագովել

_____

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. ***Կազմել տրված գոյականների հոգնակի թիվը.***

սպի _____

կին_____

մեծատուն_____

հարս_____

միջնորդագիր_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընդգծել ածականի գերադրական աստիճանի օրինակները.

լավագույն, կաթնագույն, սրճագույն, խստագույն, ստորագույն, բարձրագույն, վարդագույն, փոքրագույն, նարնջագույն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Սյունակներում առանձնացնել որակական և հարաբերական ածականները.

կույր, բևեռային, հեռու, կեղծավոր, կաղ, խաղաղ, ժայռեղեն, գյուղական,հայրենի, ոսկեկուռ:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ	ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Առանձնացնել և սյունակներում գրել.

ինչ, մերթ, մյուս, վեհորեն, ինչ-որ, փոքր-ինչ, սրա, հետզհետե, մեկմեկու, նախօրոք:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	ՄԱԿԲԱՅՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Տրված թվականները գրել բառերով.

1899_____

671_____

140010_____

XX _____

13-րդ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Որոշել տրված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*

ապավինել եմ _____

կարդային_____

կերգեր_____

պիտի վերադառնաք_____

հեռացե՞ք_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի հերթականությունը.

ա/ Մինչ, հանդես, սկսվել, Մարգարիտ, Հարությունյան, հարցազրույց, անցկացնել:

_____

_____

բ/ Ղրիմ, հայկական, գաղութ, պատկանել, է, հայ, նշանավոր, գաղութներ, թիվ:

_____

_____

գ/ Մենք, նախնիներ, քար, վրա, են, արձանագրել, պատմական, կարևորագույն, դեպքեր, ու, իրադարձություններ:

_____

_____

դ/ Սևանա, լիճ, բնություն, հազվագյուտ, հրաշալիքներ, մեկ, է, այն, աշխարհ, ամենաբարձրադիր, լճեր, մեկ, է:

_____

_____

_____

ե/ Եթե, Կրասոս, ուշիուշով, հետևել, Արտավազդ, խորհուրդ, ապա, պարթևներ, չէին, կարողանալ, դիմադրել, նրանք: